ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները (այսուհետ՝ անդամ պետություններ), նպատակ ունենալով շարունակել համագործակցությունը «Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի շրջանակներում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Երկարաձգել ««Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավոր կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից և ուժի մեջ է մտնում սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Այն անդամ պետության համար, որի օրենսդրությամբ նախատեսված չէ միջազգային համաձայնագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, այդ անդամ պետության կողմից սույն Արձանագրությունը կիրառվում է ներպետական ընթացակարգերի կատարման օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է *Մոսկվա* քաղաքում, *2016 թվականի նոյեմբերի «23»*-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, հանդիսանալով սույն Արձանագրության ավանդապահը, յուրաքանչյուր անդամ պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	Բելառուսի Հանրապետության կողմից՝	Ղազախստանի Հանրապետության կողմից՝	Ղրղզստանի Հանրապետության կողմից՝	Ռուսաստանի Դաշնության կողմից՝
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/